

# Ր Ա Յ Յ Ի

(ՄԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ)

Գրեց՝ Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

## V

Մարդը եւ ժամանակը — Ռուսահայոց վերելքը 70-ական եւ 80-ական քուականներուն — Արեւմտեան հոսանքներ — Մանձոնի եւ Բաֆֆի — Իտալիան եւ Հայաստան — Հայրենի կեանքի վերլուծումը — Կղերը եւ բուրժուազիան Բաֆֆիի գրչին տակ — Խարազան՝ կեղեքիչներու դէմ եւ ձօն՝ Աշխատակիցն ու աշխատաւոր գանգուածին — Բաֆֆիի ընկերային աշխարհայեացքը — Դեմոկրատիզմ եւ ընկերվարական հովեր — Բաֆֆին՝ որպէս խորհող — Թոնիչներ դէպի պատմափիլիսոփայութեան եւ ընկերարանութեան աշխարհը — Բաֆֆին եւ քուրքահայ իրականութիւնը —

**ՊԱՏՄԱԿԱՆ** միջավայրը յառաջ քաշեց մարդը, բայց մարդն ալ իր բոցեղէն հանճարով ստեղծեց նոր միջավայր, բարոյական, իմացական, գաղափարային նոր միջնորոտ իր ցեղային շրջանակի մէջ — յեղափոխական միջնորոտ մը:

Բաֆֆիի ստեղծագործութեան ժամանակաշրջանը — անցեալ դարու եօթանասնականութունական թուականները — անտարակոյս, մեր պատմութեան ամենէն յուզումնալից եւ միանգամայն ամենէն փայլուն ու բեղմնաւոր շրջաններէն է: Պատմական եւ քաղաքական միջնորոտը մեծապէս նպաստաւոր էր հայ մըշակոյթի եւ հայ ազգային գիտակցութեան փթթման համար: Ալէքսանդր Բ.ի համեմատաբար մեղմ ուժի մի տակ կովկասեան հայութիւնը լայն շունչ առաւ եւ անսովոր մղում թուաւ թէ՛ իր առեւտրի ու արդիւնաբերութեան եւ թէ՛ մտաւոր յառաջխաղացութեան: Հրապարակ եկաւ անդրկովկասեան մեծ կենդրրոններում, գլխաւորապէս նախաշարժի մէջ, հայկական խոշոր գրամագլուխը, հայ կապիտալիզմը, որուն վիճակուած էր յայտնի դեր խաղալ ազգային մշակոյթի յառաջադիմութեան գործի մէջ:

Միւս կողմէն, 70-ական թուականներու վերջերուն, կը բոցավառուէր թուրքական Արեւելքը, բաղկանեան ազգերը կ'ապստամբէին ու կը թօթափէին օսմանեան լուծը, Ռուսաստանը կը հարուածէր «Հիւանդ Մարդուն» միանգամայն Եւրոպայէն եւ Ասիայէն, Հայաստանը կը դառնար ռազմաբեմ եւ շէյխ Ջէլալէդդիներու հրոսակները մահ ու աւերած կը սփռէին հայկական դաւառներում: Հայ զորավարներու շքեղ բոյլ մը կ'առաջնորդէր ուսաց բանակը կովկասեան ռազմաճակատում եւ անոնցմէ շքեղագոյնը կ'երթար քիչ յետոյ բաղմէյու զիջտատորական աթոռին վրայ, որպէս վարիչ ուս կայսրութեան ճակատագրի ուսաց զօրքը Լօրիս-Մեյլիքովի առաջնորդութեամբ եւ թուրքահայ ժողովրդի ցնծութեան ազգաբաններու մէջ, յաղթական մուտք կը գործէր էրզրում, առաջին անգամը դարերէ ի վեր քրիստոնէայ պետութեան մը դըրօշը կը տնկուէր Թուրքահայաստանի սրտին մէջ...

Իսկ անդին՝ սուլթանանիստ մայրաքաղաքում, պետական արիւնյալի «հարուածէ» մը յետոյ, կը հռչակուէր Սահմանադրութիւն աբեմտեան նշանաբաններով, կը հաստատուէր Յոհրդարան մը, որու բեմէն կը ճառէին շարք մը հայ երեսփոխաններ: միաժամանակ Հայկական Հարցը — թողնուած Յրիմեան պատրիարքին իբր ժառանգութիւն Վարժապետեանին, բուն կերպով կ'արժարժուէր հայ մտաւորականութեան շրջաններում եւ Ազգային ժողովի մէջ, ապա կ'երթար հայ պատուիրակութիւն մը զէպի Բերլին՝ Վեհաժողովի դուռը ծեծելու... 16-րդ, 61-րդ յօդուածներ, խանդավառութիւն եւ յուսալքում, բերկրանք ու վհատութիւն, — սաղին ու անդին, թուրքահայոց եւ ուսահայոց մէջ...

Երբեք, անտարակոյս, հայ քաղաքական անկախութեան կորսուելէն ի վեր, չէր եղած հայոց մէջ այդքան շարժում, եռուզեռ, երբեք